# Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

## Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոց

## 2023-2024թթ ուսումնական տարի

Ուսումնական գծով փոխտնօրեն  Աիդա Գասպարյան

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Պարտադիր կրթության կենսագործում
2. Գիտամանկավարժական գործունեություն
3. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում
4. Ներդպրոցական վերահսկողություն ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ
5. Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

## Բաժին 1.

## Պարտադիր կրթության կենսագործում

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Հիմնական պարտադիր կրթության համար համալրել դասարանները: | օգոստոս | տնօրեն, ՈՒԳՓ |
| 2. | Կազմել հաստատության ուսումնական պլանը ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. Հուլիսի 22-ի N 54-Ն հրամանի: | օգոստոս | ՈՒԳՓ |
| 3. | Կազմել ուսուցիչների ժամային գրաֆիկը և ներկայացնել տնօրենի հաստատմանը: | սեպտեմբեր | ՈՒԳՓ |
| 4. | Դասաբաշխումը, ուսումնական պլանը մուտքագրել ԴԿՏՀ համակարգ: Համակարգել էլեկտրոնային մատյանների աշխատանքը: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ |
| 5. | Կազմակերպել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները և ապահովել դրանց որակը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 6. | Կազմակերպել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը դպրոցական մակարդակում և անհատական ուսուցման պլանի մշակումը, իրականացումն ու գնահատումը: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ |
| 7. | ՈՒշադրության կենտրոնում պահել ուսման մեջ ետ մնացող աշակերտներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 8. | Դժվար դաստիարակվող, չառաջադիմող երեխաներին ընդգրկել արտադպրոցական խմբակներում՝ըստ նրանց հետաքրքրությունների և ընդունակությունների: | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ |
| 9. | Աշխատանք տանել 5-12-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ: | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ |
| 10. | Աշակերտներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին և պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար: | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ |
| 11. | Նոր ընդունված աշակերտներին ներգրավել ներդպրոցական աշխատանքներին՝ ելնելով նրանց ցանկություններից և ընդունակություններից: | օգոստոս | փոխտնօրեններ |

## Բաժին 2.
## Գիտամանկավարժական գործունեություն

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով | ուստարվա սկիզբ | տնօրեն, ՈՒԳՓ |
| 2 | Աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով ապահովվելու ուղղությամբ: | օգոստոս-սեպտեմբեր | տնօրեն, ՈՒԳՓ, գրադարանի վարիչ |
| 3 | Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 4 | Մասնախմբերի օգնությամբ ուսումնասիրել բոլոր առարկաների դասավանդման վիճակը, արդյունքները քննարկել մանկխորհրդի նիստում: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, մասն. ղեկավար |
| 5 | Ուսումնասիրել լաբորատոր, գործնական աշխատանքների վիճակը ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության դասերին: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, մասն. ղեկավար |
| 6 | Կազմակերպել դպրոցական օլիմպիադա հայոց լեզու,ռուսաց լեզու, անգլերեն, մաթեմատիկա, ֆիզիկա, հայոց եկեղեցու պատմություն, կենսաբանություն,քիմիա, աշխարհագրություն, հայոց պատմություն, ՆԶՊառարկաներից: | դեկտեմբեր | ՈՒԳՓ, մասն. ղեկավար |
| 7 | Կազմակերպելառարկայականշաբաթներ, միամսակներ: Առարկայականմիամսյակներին.<br>ա/Կազմակերպելցերեկույթներ, բացդասեր<br>բ/Լույս ընծայել պատի թերթեր<br>գ/Հրավիրելմասնագետներ տարբերուսումնական հաստատություններից, հնարավորության դեպքում ԿԶՆԱԿ-ից | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, ՄԿԱԳՏ, մասն. ղեկավար, |
| 8 | Ուսումնասիրել շրջանավարտների գիտելիքների ու կարողությունների մակարդակին ներկայացվող պահանջների /չափորոշիչների/ կատարումն ըստ ուսուցանվող առարկաների: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, մասն.ղեկավար |
| 9 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ամիսը մեկ անգամ ուսումը կազմակերպել համակարգչային դասարանում | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, ուսուցիչներ |
| 10 | Աշխատանք տանել ուսուցիչների տարակարգի բարձրացման և կամավոր ատեստավորման մասնակցության ավելացմանը: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ մասն. ղեկավար |

## Բաժին 3.
## Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Տարեվերջին հրավիրել առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ հանգնարարել՝ | | |
| ա | առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման | օգոստոս | տնօրեն, ՈՒԳՓ |
| բ | ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ | մինչև սեպտ.1 | ՈՒԳՓ, մասն. ղեկ. |
| գ | ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն տնօրինությանը: | սեպտ.1-10 | ՈՒԳՓ |
| 2 | Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություններ: Լսել մասնախմբերի ղեկավարների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ հմապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հարցեր: | ամիսը մեկ անգամ | ՈՒԳՓ |
| 3 | Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մասնագիտական, մեթոդական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով: | օգոստոս, սեպտեմբեր | գրադարանի վարիչ, ՈՒԳՓ |
| 4 | Հարստացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցած լինի ուսումնադիտողական նյութերով,լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը(ՏՀՏ): | ուստարվա ընթացքում (հնարավո րության դեպքում) | տնօրենություն |
| 5 | Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություններ, ծանոթացնել ուսումնական պլաններին, ուսումնական և դաստիարակչական պրոցեսներում տեղ գտած նորամուծություններին: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ |
| 6 | Պլանավորել մասնախմբերի գործունեությունը,մեթոդամանկավարժական աշխատանքները: | օգոստոս, սեպտեմբեր | ՈՒԳՓ |
| 7 | ՈՒշադրության կենտրոնում պահել երիտասարդ ուսուցիչներին: Նրանց համարկազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, ՄԿԱԳՏ, մասն. ղեկ. |
| 8 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ Կրթության օրենքներին, կառավարության որոշումներին, գիտության և կրթության նախարարության հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 10 | Ապահովել ուսուցիչների մասնակցությունը առարկայական վերապատրաստումներին, որակավորման և ատեստավորման գործընթացներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 11 | Ստեղծագործ ուսուցիչներին ընդգրկել մանկավարժական հետազոտական աշխատանքներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 12 | Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ՝ այդ նպատակով հրավիրելով բարձրորակ մասնագետների: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 13 | Առարկայական մասնախմբերում քննարկել յուրաքանչյուր ուսուցչիմեթոդամանկավարժական զեկուցումները: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, մասնախմբերի ղեկավարներ |
| 14 | Կատարել դասալսումներ միջին հաշվով շաբաթական՝ 3 ժամ ՈՒԳՓ, 1-2 ժամ՝ մասնախմբերի ղեկավարներ, 1 ժամ՝ ուսուցիչ: Դասալսումները կատարել նպատակային, նույն օրը քննարկել ուսուցչի հետ: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, մասնախմբերի ղեկավարներ, ուսուցիչ |
| 15 | Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ ուսուցիչներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |
| 16 | Մանկավարժական խորհրդում ներկայացնել առնվազն չորս զեկուցումներ: | ուստարվա ընթացքում | ՈՒԳՓ, մասնախմբերի ղեկավարներ |
| 17 | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել գիտելիքներիստուգման, ավարտականքննություններիընդրանցխորհրդատվությունն երիկարգացուցակները՝ քննություններից առնվազն 10 օր առաջ: | մայիս | տնօրեն, ՈՒԳՓ |
| 18 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննություններին նախապատրաստելու համար: | մայիս, հունիս | տնօրեն, ՈՒԳՓ |
| 19 | Ուսումնասիրել և խրախուսել առաջավոր փորձը: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ |

## Բաժին 4.
## Ներդպրոցական վերահսկողություն

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Ուսումնական տարվա սկզբից գործածության մեջ դնել ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյանը: | հունվար | ՈՒԳՓ |
| 2. | Սահմանել վերահսկողություն ուշացումների և Անհարգելի բացակայությունների նկատմամբ: | Ամեն օր | տնօրեն, ՈՒԳՓ |
| 3. | Ստուգել ուսուցիչների անհատական թղթապանակները, ծրագրային նյութերի և թեմատիկ պլանավորումների վիճակը: | սեպտեմբեր | ՈՒԳՓ |
| 4. | Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԳՓ դասղեկներ |
| 5. | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնակագիտական առարկաներից: | նոյեմբեր, ապրիլ | ՈՒԳՓ |
| 6. | Սովորողների գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին ծանոթանալու և համապատասխան աշխատանք կազմակերպելու նպատակով համադպրոցական գրավոր աշխատանքներ անցկացնել հայոց լեզվից, մաթեմատիկայից, օտար լեզուներից, հայոց պատմությունիցև արդյունքները քննարկել մասնախմբերում: | ապրիլ | տնօրեն, ՈՒԳՓ, մասնախմբի ղեկավար |
| 7. | Ստուգել աշակերտական տետրերի վարման վիճակը: | պարբերաբար | ՈՒԳՓ, ՄԿԱԳՏ, դասվար,դասղեկ |
| 8. | Գրավորների միջոցով ստուգել ավարտական դասարանի սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին և նորմերին: | II կիսամյակ | տնօրեն, ՈՒԳՓ, դասավանդող ուսուցիչներ |
| 9. | Գրավորների միջոցով ստուգել 4-րդ դասարանի սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին և նորմերին մայրենի և մաթեմատիկա առարկաներից: | մայիս | ՈՒԳՓ, մասն. ղեկ. |
| 10. | Բոլոր դասարաններում ստուգել բոլոր առարկաներից տրվող թեմատիկ աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում: | կիսամյակի վերջում | տնօրինություն |
| 11. | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը /քննարկել որակական տեսակետից/, և արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստում: | դեկտեմբեր,հունիս | տնօրեն, ՈՒԳՓ , մասնախմբի ղեկավար |
| 12. | Ստուգել էլեկտրոնային դասամատյանները և նշումներ կատարել դրանց վարման վերաբերյալ: | պարբերաբար | ՈՒԳՓ |
| 13. | Ստուգել դժվարությամբ առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | նոյեմբեր, ապրիլ | ՈՒԳՓ |
| 14. | Վերահսկողություն իրականացնել մանկավարժական խորհրդի նիստերի, տնօրենին կից խորհրդի նիստերի, խորհրդակցությունների, մասնախմբերի նիստերի միջոցով: | ուստարվա ընթացքում | տնօրենություն |
| 15. | Կատարել շաբաթական դասալսումներ: | մշտապես | ՈՒԳՓ |